



**«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 57-Ա

13 հոկտեմբերի 2025 թվականի

**«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՌԵԿՏՈՐԻ (ՏՆՕՐԵՆԻ) ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 27-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությամբ, «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՎՊՀ հոգաբարձուների խորհրդի 2025 թվականի հոկտեմբերի 13-ի առցանց կայացած նիստի քվեարկության արդյունքները (16 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ)՝ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. 2025թ. հոկտեմբերի 14 -ից «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի (տնօրենի) ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Արմեն Միշայի Ծատուրյանին՝ սահմանված կարգով նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր մինչև հիմնադրի կողմից «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի (տնօրենի)՝ **2025 թվականի հոկտեմբերի 7-ի ընտրության արդյունքների հաստատումը:**

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՎ՝

Ա.ՍՎԱԶՅԱՆ